

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

<p>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը</p>	<p>Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը</p>
<p>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ն.Տիգրանյան փողոցի 1-ին փակուղի N1 հասցեում գտնվող 01-003-0213-0092 կադաստրային ծածկագրով 3.348167 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր</p>	<p>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ն.Տիգրանյան փողոցի 1-ին փակուղի N1 հասցեում գտնվող 01-003-0213-0092 կադաստրային ծածկագրով 3.348167 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր</p>

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված պահանջները (կցվում են):
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պայմանը՝ հողային աշխատանքներ իրականացնելիս «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության աշխատակցի ներկայությունը պարտադիր է (գրությունը կցվում է):

4. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

